ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 6

«15» 02 2019 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» N 119 հրամանով հաստատված կանոնակարգի 69-րդ կետը, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի 2019 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 93 հրամանի պահանջները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչությունում իրականացնել վարչության 2018 թվականի գործունեության աուդիտ (այսուհետ՝ աուդիտ):
2. Աուդիտն իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի բաժնի պետ Ս.Միրզոյանի և նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ.Գևորգյանի միջոցով:
3. Աուդիտի իրականացման աշխատանքներն ավարտել մինչև 2019թ. հուլիսի 15-ը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին ու Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ